

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ
(Հակոբ ԱՆՍՅԱՆԻ ԾՆՆՈՂՅԱՆ 100-ամյակի առթիվ)

Գիտական վիժխարի և մնայուն ժառանգություն թողած ակնավոր հայազետ Հակոբ Սեդրակի Անսյանը ծնվել է 1904 թ. Փոքր Ասիայի էսկիշեհիր քաղաքում՝ կուտինահայ ընտանիքում: Ուսումնատենչ պատանին տասնհինգ տարեկան հասակում մեկնում է Վենետիկ, Ս. Ղազար կղզու Մխիթարյան միաբանություն: Ավելի քան տաս տարիների ընթացքում հիմնավոր կրթություն և դաստիարակություն է ստանում, հմտանում մեռած ու կենդանի լեզուների մեջ: Այստեղ են ձևավորվում և ուղղություն ստանում հայրենի գիտությունն անաղարտ ծառայելու աշխատասեր պատանու ունակությունները:

1931–1934 թթ. նա Փարիզում հետևում է անվանի պատմաբան-բանասեր Կարասյես Բասմաջյանի հայադիտական դասախոսություններին: Ապա 1936 թ. Արշակ Չոպանյանի և Ավետիք Իսահակյանի միջնորդությամբ ներգաղթում է Հայաստան: Մայր Հայրենիքում 40 տարի ծախյալում է բեյուն ու արդասարեք գիտական-ստեղծագործական դործունեություն: Ինչպես ինքն է հավաստում, հայրենիքում է անցկացրել իր գիտական կյանքի մեծագույն և լավագույն մասը:

Իր 80-ամյա հորելյանի օրերին արված հարցին, թե ինչպես է բնութագրում իր անցած ուղին, Անսյանը պատասխանել է. «Նթե ես իմ ծնողներից եմ ժառանգել եռանդը, կամքը և համբերությունն ու հարատևելության հողին, եթե Մխիթարյան դասական դպրոցն է ինձ ներշնչել մղումը՝ նվիրվելու հայադիտությանը և տվել նաև աշխատանքի գիտական մեթոդ, ապա Մայր Հայրենիքն է, որ իր հարազատ մթնոլորտով և ընձեռած լիառատ հնարավորություններով խթանել է իմ վճռականությունը՝ իմ նախասիրությունների ուղիով գնալու, ապահովել է իմ վերելքը գիտության աստիճաններով, որպեսզի կարողանայի մարմնավորել իմ երազները և իմաստավորել իմ ողջ կյանքը՝ ինձ և իմ ժողովրդի համար: Ուստի՝ խոր երախտագիտություն եմ լցված հայրենիքիս նկատմամբ»¹:

Հայրենիք վերագառնալով՝ աշխատանքի է անցնում Երևանի պետական համալսարանում նախ որպես գրադարանի աշխատակից, ապա մատենադիտության բաժնի վարիչ և միաժամանակ ն. Մառի անվան կաթինետի գիտաշխատակից: Այստեղ նախանձելի աշխատասիրությամբ իր հետաքրքրությունների շրջանակներում գրականության և պարբերական մամուլի միջոցով ստեղծում է գիտելիքների այն կայուն պատվանդանը, որի հիմքի վրա պետք է ծավալվելին նրա ապագա ստեղծագործական աշխատանքները: 1941 թ. գորակուչվում է բանակ և մասնակցում Հայրենական

¹ Հակոբ Անսյան. Լոս Անջելես, 1984, էջ 25:

մեծ պատերազմին²: 1945 թ. վերադառնալով Երևան՝ կրկին աշխատանքի է անցնում Համալսարանում:

Համալսարանի դիտական մասի սլոոեկտոր, անվանի պատմաբան, ակադեմիկոս Աբդար Հովհաննիսյանը, տեսնելով Անասյանի դիտական հակումներն ու բարեխիղճ աշխատանքը, 1947 թ., երբ ստանձնում է ՀՀ ԿԱԱ պատմության ինստիտուտի տնօրենի պաշտոնը, նրան աշխատանքի է հրավիրում այնտեղ: Այդուհետ 30 տարի Հ. Անասյանի դործունեությունը՝ անխղճելիորեն կապվում է Ակադեմիայի գիտական նշանավոր այդ կենտրոնի, ինչպես և ձեռագրական մեծ հավաքածու և հայադիտական օրինակելի դրագարան ունեցող Մաշտոցի անվան Մատենադարանի հետ, որը դարձել էր նրա ամենօրյա աշխատանքի վայրը:

Բնատուր տաղանդի, բացառիկ աշխատասիրության, չափազանց լայն գիտելիքների շնորհիվ Անասյանը գիտական-ստեղծագործական մեծ հաջողությունների հասավ: Այդ հաջողությունների հիմնական գաղտնիքը կայանում է նրանում, որ իրեն զբաղեցնող հիմնահարցերը նա ուսումնասիրել է միաժամանակ և՛ որպես պատմաբան և՛ որպես բանասեր, աղբյուրագետ, բնագրագետ, ձեռագրագետ, օգտվելով հունարեն, լատիներեն, ֆրանսերեն, իտալերեն, թուրքերեն, ռումիներեն, ռուսերեն աղբյուրներից: Նա իրեն հետաքրքրող հարցերը հետազոտում էր նյութի այնպիսի խոր ու համակողմանի իմացությամբ, վաստերը ճշգրտելու այնպիսի բժանդրությունով, որ էլ թողնում թերի ուսումնասիրած կամ մոլթ մնացած որևէ մի կետ: Իր հանդես ծայրահեղ սահմանափակումներ և մշտապես նոր հայտնություն կատարելու ձգտումը հատուկ է եղել նրան: Գիտություն մեջ քայլելով շտրոբված արահետներով հաճախ է անակնկալներ մատուցել, մեծ ու փոքր նորություններով ու հայանադործություններով հարստացնելով հայագիտությունը:

Պատմագիտության սուբյորեզում նշանակալի է Հ. Անասյանի վաստակը հայ ազատագրական շարժումների հետազոտման մեջ: Տակավին 1934-ին հրատարակեց «Նպաստ մը հայոց ազատագրական պատմության (ԼԺ դար) Մահտեսի Շահմուրաա և Հովհաննես Թուրթունջի» նորություններ պարունակող նյութերով հարուստ հոդվածը («Երկունք», հոկտեմբեր-դեկտեմբեր): Հարյր սալառված չհամարելով շարունակեց հետագա մտորումներն ու քանասեր պրպատումները՝ ընդլայնելով ուսումնասիրության հորիզոնները:

Անասյանը բարձրագույն հին հրատարակությունների՝ առանձին տվյալներն ու բեկորները, նորահայտ, ինչպես և սակավամշակ և անտեսված նյութերը զարմանալի հմտությամբ ու տրամաբանությամբ մեկ առ մեկ համագրելով, աղյուս առ աղյուս շարելով կառուցում է ավարտուն մի շենք: 1961 թ. հրատարակվեց նրա շուրջ 30 տարիների մանրակրկիտ հե-

² 1912–1944 թթ. լինում է գերություն մեջ Խուսիսյանի Բոլզրաղ քաղաքի ուղիղաբ-րիների կայանում: Նկատի առնելով նրա գրագիտությունը, ձեռակերպում են պատմագիտական ուղիղաբների աշխատավայր գործարանի գրագրարանում: Անասյանին այցելում է ուսման հայ նշանավոր պատմաբան-բանասեր Հակոբ Միրունին, նվիրում ուսման ակադեմիայի գրող Միքայել Էմինովիչի մասին իր աշխատությունը: Հենց ճամբարում, 1943 թ. գրում է «Ոչ թե իմանովիչ, այլ էմինովիչ» ծավալուն հոդվածը, որը հետագայում աղագրվում է «Հանգստե Ամսորայում» և տպւ իր աշխատությունների ժողովածուում (տես Հ. Ա. Ա. Ն. Ա. Ն. Մանր երկեր, Լոս Անջելես, 1987, էջ 795–805):

տաղտուկությունների արդյունքը՝ նվիրված XVII դ. ազատագրական շարժումներին³: Պատմագրություն մեջ նոր խոսք ասող ծավալուն այդ մենագրությունը նորություններ էր բերում, ճշգրտումներ մտցնում մեր պատկերասրահների մեջ և ամբողջացնում XVII–XVIII դդ. թուրքական բռնատիրությունների դեմ հայ ազատագրական շարժումների պատմության համայնապատկերը:

Մանրակլիո. այդ աշխատությանը վերանայվեց արմատացած այն տեսակետը, թե հայ ազատագրական շարժումները ծավալվել են միայն Արևելյան Հայաստանում: Բերված անառարկելի վիստերը հավաստում են, որ Հայաստանի արևմտյան հատվածում ազատագրական շարժումները Արևելյան Հայաստանից ավելի առաջ են սկսվել. դրանք Հակոբ Զուղախցու 1677 թ. դադարի ժողովին նախորդել են 10–12 տարով:

Հեղինակն ազդային շարժումները քննարկում է միջազգային հարաբերությունների լայն հետնախորքի վրա: Նա արևմտահայերի շարժումները կամրջում է թուրքական տիրապետության դեմ հույների, ասորիների, վրացիների սլաքարի հետ: Ցույց է տալիս Եվրոպայի դրական վերաբերմունքը և այն միտումը, որ այդ սլաքարում վճռական դեր էր վերագրվում Ռուսաստանին: Ազատագրական շարժման նոր դրվագներ բացահայտելու հետ մեկտեղ այդ ուսումնասիրությունը ուղի է հարթում մասնագետներին համար նոր հարցադրումներ կատարելու, հետազոտական միտքն ուղղելու Արևելյան Եվրոպայում կազմակերպվող (հայ դիվանագետների ակտիվ մասնակցությունն ունեցող) հակաթուրքական կոալիցիայի հետ ունեցած աղերսները բացահայտելուն:

Անասյանն անդրադառնում է նաև նախորդ շրջանի՝ XVI դ. ազատագրական շարժման նշանավոր դեմքերից մեկի՝ Ստեփանոս Ե Սալմաստեցու, հայոց հայրապետի և ճանաչված մտավորականի գործունեությանը⁴: Նոր նյութերի ներգրավումով և եղած տվյալների յուրովի մեկնաբանությամբ նրան հաջողվում է լույս սփռել Սալմաստեցու կյանքի մութ մնացած կողմերի վրա:

Հայ ազատագրական շարժումների հարցերն են քննարկվում նաև Օսմանյան կայսրության և Վենետիկի հանրապետության միջև XVII դ. կեսերին սկսված կրետեի (Կանդիայի) պատերազմի առիթով⁵: Հեղինակը բացահայտում է եվրոպական դիվանագիտական միտումներն ու ձեռնարկած գործնական քայլերը: Եվրոպան իր միսիոներների միջոցով կապեր հաստատելով հայ և հույն հոգևոր ու քաղաքական գործիչների հետ, հայ-հունական միացյալ ընդվզում կստանա սպստամբություն էր հրահրում թուրքիայի թիկունքում: Հեղինակի կատարած աշխատանքն արժևորվում է նաև նրանով, որ ուսումնասիրությունը կցել է, մեծ մասամբ իր կողմից հայտնաբերած, դժվար մատչելի վավերագրեր:

³ Ժէ դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում. Երևան, 1961:

⁴ Դիտողություններ Ստեփանոս Սալմաստեցու կենսագրության վերաբերյալ («Էջմիածին», 1950, № 8-9, էջ 11-12), Ս տ ե փ ա ն ո ս Ս ա լ մ ա ս տ ե ց ր Ի (հատվածներ նոր ուսումնասիրությունից). – «Սիոն», 1980–1981 թթ.:

⁵ Հայ-հունական ազատագրական շարժման մի էջ Կանդիայի պատերազմի շրջանից (Ժէ դար). – «Տեղեկագիր հաս. դիտ.», 1954, № 3:

Հ. Անասյանը աղատագրական շարժումներին նվիրված բոլոր հետազոտություններում, թեկուզև համառոտակի, լուսաբանել է նաև հայ բնակչության համար ստեղծված ծանր դրությունը: Նա առանձին աշխատանքով ևս անդրադարձել է թուրքական տիրապետության ծանր հետևանքներին⁶: Այդ առումով ուշագրավ է հատկապես «Փութուվլաթը և հայերը» աշխատությունը⁷: Դրանով նա գիտական հասարակայնությանն է ներկայացնում թուրքական իշխանությունների ձուլողական քաղաքականության անծանոթ մի դրվագ: Հայ արհեստավորներն իրենց արհեստով ղբադվելու համար իշխանությունների հարկադրանքով սլարտավոր էին իսլամների հետ անդամակցել թուրքական արհեստավորական միությունների (ֆութուվլաթին): Դրա համար նրանց ենթարկում էին իսլամական ծիսակատարություններին և այդ եզանակով իսլամացնում:

Թուրքիայի հետ է առնչվում Բյուզանդիայի անկմանը նվիրված հեղինակի աղբյուրագրիտական մի աշխատություն ևս, որը հրատարակվեց Կոստանդնուպոլիսի գրավման 500-ամյակի առիթով⁸: Արևմուտքն Արևելքի կամ Եվրոպան Ասիայի հետ կամրջող քաղաքակիրթ երկրի՝ Բյուզանդիայի անկումը ծանր տպավորություն գործեց համաշխարհային հանրության, այդ թվում և հայ իրականության վրա: Այդ իրադարձություններին արձագանքեցին նաև ժամանակակից հայ մասնագիտները: Հեղինակը հրատարակում է Աբրահամ Անկյուրացու, Առաքել Բաղիչեցու չափածո ողբերը և Երեմիա Չելեսլի Քյոմուրճյանի օսմանյան տիրապետությանը նվիրված երկի գիտական-բաղդատական բնագիրը՝ բովանդակակից առաջաբանով և մանրամասն ծանոթագրություններով: Անասյանը ոչ միայն շրջանառության մեջ է դնում սլատմական ուշագրավ սկզբնաղբյուրներ, այլև լուսաբանում Բյուզանդական կայսրության օրհասական պայքարը թուրք զավթիչների դեմ և ըստ արժանվույն մեկնաբանում համաշխարհային սլատմության կարևոր այդ իրադարձությունը:

Մեծ է Անասյանի վաստակը հայ եկեղեցու սլատմության, դավանանքի, աստվածաբանական հիմնահարցերի ուսումնասիրման ասպարեզում: Գիտական լուրջ արժեք է ներկայացնում Աստվածաշնչի V դ. հայերեն թարգմանություն և դրա հետ առնչվող հարցերի հետազոտումը⁹: Նա հանգում է այն եզրակացության, որ Աստվածաշնչի հայերեն հնագույն թարգմանությունը կատարվել է մինչև 431 թ.: Այդ թարգմանությունն իրականացվել է ասորական բնագրից, իսկ վերջինս էլ՝ եբրայական օրինակից: Հեղինակը բնագրագիտական բազմաթիվ հարցեր է նորոգի շոշափում Աստվածաշնչի Սահակ-Մեսրոպյան առաջին և երկրորդ թարգմանությունների տարբերակներում: Մատնանշում է նաև Նոր կտակարանի հետադաշում կրած հավելումները: Բանասիրական մի շարք ճշգրտումներ կատարելով, նա ասլացուցում է, որ Սուրբ Գրքի հայկական բնագրի սրբագրումներ

⁶ Թուրքական տիրապետությունը Հայաստանում ժէ դարում.— «Տեղեկագիր հաս. գիտ.», 1951, № 5:

⁷ Թուրքական Փութուվլաթը և հայերը (Օսմանյան կայսրության ձուլողական քաղաքականության սլատմությունից).— «Հանդես Ամսոլյա», 1979:

⁸ Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին. Երևան, 1957:

⁹ Աստվածաշնչի մատնանի հայկական բնագիրը. Երևան, 1976: Էջմիածնի ապարանի սուրբգրային հրատարակությունները.— «Էջմիածին», 1972, № 12 և այլն:

րը կատարվել են ոչ թե XIII դ. Հեթոմ II թագավորի ձեռքով, այլ XV II դ. Ռսկան Երեանցու միջոցով: Անցյալում կատարած աշխատանքներն ըստ արժանվույն ղնահասակով նա գանուած է, որ անհրաժեշտ է իրականացնել Սուրբ Գրքի բնագրի գիտական հրատարակութունը:

Հայագետն ուսումնասիրել է մասնագետների կողմից անտեսված համարաբառների սլատմութունը հայ մատենագրության մեջ և անդրադարձել բանասիրական մի շարք հարակից հարցերի¹⁰: Նա հետազոտում է համարաբառային գրականության սկզբունքները, սլարդում դրանց առնչութունները օտար գրականութունների հետ, ուրվադժում հետագա պարպումն ուղիները, նշում նշանակութունը համալսարհային գրականության համար:

Միջնագարյան հայ նշանավոր դեմքերից Վարգան Այգեկցին (XII–XIII դդ.) մատենագիտության մեջ հայտնի էր որպես առակագիր, քարոզների, խրատների հեղինակ: Մեծանուն կովկասագետ Նիկողայոս Մառի կատարած հիմնավոր ուսումնասիրութուններից հետո թվում է, թե այլևս անկարելի է նոր խոսք առել նրա մասին: Հ. Անասյանը Մատենագրանի ձեռագիր հավաքածուններում անխոնջ պրպումների ընթացքում հայտնարերեց Վարգան Այգեկցու գրչին սլականսղ երեք գործ¹¹: Այդ հայտնագործությամբ հայագիտության մեջ լուրջ ներդրում կատարվեց, քանի որ միջնագարյան նշանավոր հեղինակը ներկայացավ միանգամայն նոր կողմերով: Նա հայտնի դարձավ որպես լիր ժամանակի նշանավոր հոգևոր գործիչ, հայ եկեղեցու գարավոր ավանդութները սլաշապանող, սլգային ինքնության համար սլաքարող, քաղկեդոնության դեմ մարտնչող միջնագարի ամենախոշոր դեմքերից մեկը:

Նվիրումը հարադատ ժողովրդի մշակութի ուսումնասիրմանը, բնածին տաղանդը, բաղմակողմանի ու հիմնավոր գիտելիքներն իրենց արտահայտութունը գտան հատկապես Հ. Անասյանի «Հայկական մատենագիտութուն» աշխատության մեջ¹²: Այն հայագիտության բնագավառում նախորինակը չունեցող կոթուլային աշխատութուն է: Հեղինակն ի մի է բերել V–XVIII դդ., մեկ ու կես հաղարամյակում ստեղծված հայերեն սլագիր ու ձեռագիր բոլոր հուշարձանները: Ասլա սլատմաբանասիրական խոր իմացությամբ ու նուրբ գիտողականությամբ քննարկել է դրանք, ներկայացնելով տվյալ հուշարձանը, հիշատակելով ու բնութագրելով գրան վերաբերող ուսումնասիրութունները, առաջ քաշել նոր խնդիրներ, կողմնորոշել հետադատողին, գյուրացրել նրա աշխատանքը: «Մատենագիտության» մեջ տրված են հայ ժողովրդի ստեղծած մշակութային հուշարձանների և դրանց նվիրված մեծ ու վաքը հետադոտութունների մատենագիտական սեղմ ու ճգրիտ բնութագրումները: Միտմամանակ նշ-

¹⁰ Հայ համարաբառային գրականութունը և հայ մատենագրության համարաբառը. էջմիածին, 1972:

¹¹ Վարգան Այգեկցին իր նորահայտ երկիր լույսի տակ: Բնագիր՝ ա) գիրք հաստատութիան և արմատ հավաստ, բ) վասն անիրավ բամբասողաց եկեղեցվույս Հայաստանյայց, գյվասն շատահաջ քննողացն հանդիմանութուն. – «Բագմավեպ», Վենետիկ, 1968, 1969: Արմատ հավատոյի աղբյուրեից. – «էջմիածին», 1977, № 8, 12:

¹² Հայկական մատենագիտութուն Ե-ԺԸ գգ. Հ. Ա. Երևան, 1959, Հ. Բ, 1976, Հ. Գ, 2004:

վում են այն նյութերն ու հարցերը, որոնց ուսումնասիրությունը ծառայած է հայագիտության առաջ:

«Մատենագիտությունը» հայ ժողովրդի դարավոր մշակույթն ուսումնասիրելու արժեքավոր բանալի է. հանրագիտական մի ուսումնասիրություն: Իզոլը չէ, որ այս աշխատությունն արժանացավ Հայաստանի և արտերկրի գիտական հասարակության բարձր գնահատականին: Արժեքավոր և դրվատալի դրախտություններ ասպարվեցին Մոսկվայում, Փարիզում, Վենեսիլում, Վիեննայում, Նյու Յորքում, Բուենոս-Այրեսում, Բեյրութում, Թեհրանում և այլուր:

Անվանի հայագետը կաղմել է նաև Փավստոս Բուզանդի (1953), Մխիթար Գոշի (1954), Կիրակոս Գանձակեցու (1961), Կոստանդին Երզնկացու (1962), Արիստակես Լաստիվերսցու (1963), Սայաթ-Նովայի (1963), Եղիշի (1967) երկերի մատենագրությունները:

Հ. Անասյանի գրչին են սրահանում նաև մի քանի էական հարցերի նվիրված գրախոսություններ, որոնք սովյալ աշխատությունն արժեքավորող սովորական բնութագրումներ չեն. դրանք հայագիտությանը ղաղեցնող այս կամ այն տեսակետի կամ տեսության հիմնավորմանն ու խորագմանն ուղղված հոդվածներ են: Այդպիսին է Գազիկ Սարգսյանի «Մովսես Խորենացու ժամանակագրական համակարգի հարցը» աշխատության մասին գրախոսականը¹³: Պաշտպանելով հեղինակի առաջադրած տեսությունը նա իրիստ հավանական է համարում, որ սելեկյան տոմարը դուրձածված լինի Հայաստանում, որը, սակայն, չի օգտագործվել պատմահար ժամանակագրական համակարգում: Նույն մեթոդով Անասյանը քանդիս անդրադարձել է աղվանագիտության, աղվանից գրականության և արուբենի, ինչպես նաև Արցախ-Նախչենի ինդիքներին¹⁴:

Նույն ձևով է նա մոտեցել նաև թարգմանական գրականությանը: Փավստոս Բուզանդի աշխատության ռուսերեն թարգմանությանը նվիրված հոդվածը նույնպես սոսկ գրախոսություն չէ¹⁵: Նա արժեքավոր գիտողություններ, ճշգրտումներ է կատարում հայ նշանավոր պատմիչի աշխատության թարգմանության մեջ և միաժամանակ անդրադառնում մի շարք հարակից հարցերի և տալիս դրանց լուծումները: Նույն եղանակով էլ նա անդրադարձել է Արիստոտելի երկերի հայերեն թարգմանությանը¹⁶:

Ընտանեկան հանդուսանքների բերումով Անասյանը 1978 թ. սեղափոխվում է Ամերիկա՝ Լոս Անջելես: Հաջորդ տարում որպես գիտական աշխատող պաշտոնի է հրավիրվում Կալիֆորնիայի համալսարանի Սերձատրեկյան ուսումնասիրությունների կենտրոն, միաժամանակ անդամակցում սրոֆ. Ավետիս ՍանՂյանի գլխավորած Գրիգոր Նարեկացի հայագիտական ամբիոնին:

¹³ Տե՛ս Խորենացու ժամանակագրական համակարգի հարցը. - ՀՀ ԳԱԱ «Լրագրեր հասգիտ.», 1966, №1:

¹⁴ Նոր հայացք աղվանագիտության բնագավառում: Նորից աղվանական այբուբենի հարցը (Հ. Մ. Ա ն ս ս յ ա ն. Մանր երկեր. էջ 393-415): Դեպի Արցախ-Նախչենի պատմության խորքերը («Բողոմավես», 1978):

¹⁵ Բյուզանդարանի ռուսերեն թարգմանությունը. Երևան, 1975:

¹⁶ Արիստոտելի երկերի հայերեն թարգմանությունները: Վեցերորդ մատյան ամենից գրեանցն Արիստոտելի (Հ. Ա ն ս ս յ ա ն. Մանր երկեր, էջ 319-347):

Ձեռագրական հավաքածուների բացակայության, գրականության պակասի հետևանքով խիստ նվազել էին գիտական գործունեության հնարավորությունները: Այդուհանգերձ, Անասյանը կարողացավ շարունակել գիտական-ստեղծագործական աշխատանքները: Ամիսներ շարունակ սյուստումներ կատարեց Երուսաղեմի հայկական ձեռագրատանը: Ապա ամբողջացրեց կիսատ մնացած ուսումնասիրությունները: Նախ ավարտեց «Հայկական մատենագիտություն» աշխատության Գ հատորը, որը, սակայն, հրատարակվեց միայն 2004 թ. Երևանում, իր ծննդյան 100-ամյա հոբելյանի օրերին:

Արտերկրում գտնվելու 10 տարիներին նրա արգասավոր գրչի արդյունքը հղան հայագիտության տարբեր հարցերին նվիրված շուրջ 20 աշխատանք: Այդ թվում հայոց ցեղասպանությանը նվիրված գրականության մատենագիտությունը՝ ուսերեն և անգլերեն լեզուներով¹⁷: «Համառոտ» խորագրով ներկայացրած մատենագրության մեջ ընդգրկված է 661 հրատարակչական միավոր:

Այնքան մեծ ու բազմաբնույթ է նշանավոր հայագետի գիտական վաստակը, որ անհնար է անդրադառնալ նրա հեղինակած բոլոր ուսումնասիրություններին, որոնց թիվն անցնում է հարյուրից: Ակնհայտ է, սակայն, մի հանդամանք. հայոց սլատմության, մշակույթի, բանասիրության ինչպիսի կնճռոտ հարյեր էլ ծառացել են նրա առաջ քննարկել է նյութի խոր ու հստակ իմացությունը, համակողմանի, մանրախոյզ, տարբեր լեզուներով սահմանված աղբյուրների տեղեկությունները համադրելու եղանակով և անկողմնակալ մոտեցմամբ: Երբ հավելում ենք դրան նրա բնական օժտվածությունը, տաղանդը, անօրինակ ու ինքնաբուխ նվիրումը և ինքնամոռաց աշխատասիրությունը, հասկանալի է գառնում, թե ինչպես Անասյանին հաջողվեց նոր խոսք ասել, նորություններ բերել և հայագիտությունը հարստացնել մնայուն, կոթողային գործերով:

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐՍՈՒԴԱՐՅԱՆ

¹⁷ Армянский вопрос и геноцид армян в Турции (Краткая библиография литературы на русском языке), составил А. С. Анасян. Лос Анджелес, 1983.